ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

«ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ» ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՍՈՒԼՏԱՆՏԻՆ

ԿԱԶՄԵՑ Բ. ԼԵՅԲՋՈՆ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ

ՀԵՌԱԿԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԿ(Բ)ԿԿ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
«ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»
ՅԵՐԵՎԱՆ 1937

07
С-33

30 APR 2013
14791
23 JUN 2009

# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆԱՄԱԿ «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՅԵՎ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՊԱՏԻ ԹԵՐԹԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ» ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Դասախոսությունը մանրամասն պատմում է, թե Գաջ-Ակրաքիմի կազմակերպությունն ինչպես պետի աշխատի գյուղում։ Նա գրված է շատ պարզ և հասկանալի կլինի յուրաքանչյուր հեռակայողի համար։ Դրա համար էլ կոնսուլտացիայի ժամանակ կարիք չկա կրկնելու դասախոսության ամբողջ նյութը, կամ հատկապես ստուգելու, թե հեռակայողներն ինչպես են յուրացրել յուրաքանչյուր բաժինը։ Ավելի կարևոր է կոնսուլտացիան այնպես կազմակերպել, որ պատի թերթերի խմբագիրները հասկանան իրենց դերը պաշտպանության աշխատանքում և նշեն մոտակա մի քանի ամիսների իրենց աշխատանքի պլանը։

Անհրաժեշտ է զրույցն սկսել հենց իրենց՝ հեռակայողների փորձի քննությունից։ Պարզել. թե պատի թերթերը որքան հաճախ են գրում պաշտպանության թեմաների մասին և հատկապես ինչի մասին են գրում (մասնավորապես պետք է ստուգել թե պատի թերթերն ինչպես են լուսաբանել Կարմիր բանակի [illegible]ակը)։

ՀԱՅ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-СОР
ИМ. А. МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Այս բաժնի մասին ղեկավարի եզրափակիչ խոսքը խիստ պատասխանատու է։

Այնպես պիտի անել, որ խմբագիրների համար միանգամայն պարզ լինի, որ պաշտպանության թեմաներով անհրաժեշտ է զբաղվել ամեն օր և ոչ միայն տոնակատարությունների կամ հատուկ կամպանիաների ժամանակ։ Կոնսուլտանտը հեռակայողներին պիտի բացատրի այն միջազգային բարդ իրադրությունները, որոնք յուրաքանչյուր խորհրդային հայրենասերից պահանջում են շարունակ հոգ տանել սոցիալիստական հայրենիքի պաշտպանության մասին։ Կոնսուլտանտը պետք է նշի, որ պատի թերթի ամբողջ աշխատանքն ուղղված պիտի լինի կոլտնտեսականների մեջ խորհրդային հայրենասիրության զգացմունք առաջացնելու և ամրապնդելու ուղղությամբ։

Հեռակայողներին կարելի է տալ մի քանի գործնական խորհուրդ։ Թող պատի թերթի խմբագիրները մշտական նամակագրություն ստեղծեն Կարմիր բանակում եղած կոլտնտեսականների հետ։ Կարմիր բանակայիններից ստացված և այդ պատի թերթում տեղավորված նամակները դաստիարակչական խոշոր դեր կխաղան։ Նրանք կուժեղացնեն կոլտնտեսականների սերը դեպի Կարմիր բանակը, կմեծացնեն նրանց հետաքրքրությունը դեպի ռազմական ուսուցումը։

Պատի թերթում կարելի է նաև առանձին կըտորներ տեղավորել այն նամակներից, որ կարմիր բանակայինները գրում են իրենց ծնողներին ու ազգականներին։



Ապա, պատի թերթը պետք է պարբերաբար տպագրի նախազինակոչիկների նամակները, փոփոխիկների հավաքի գնացած կամ այնտեղից վերադարձած կոլտնտեսականների նամակները։

Ցերեկույթ-երեկույթ կարելի է տեղավորել նաև քաղաքացիական կռիվների ժամանակ ծ նախկին պարտիզանների ու կարմիր բանակայինների հիշողությունները։

Քաղաքացիական կռիվներից վերցրած հետաքրքիր պատմվածքները ևս երիտասարդության վրա դաստիարակչական ազդեցություն կունենան։

Մի խոսքով, պատի թերթը պետք է ձգտի նրան, որ բազմապիսի կենդանի նյութերի հրապարակումով անընդհատ բարձրացնի կոլտնտեսականների հետաքրքրությունը դեպի երկրի պաշտպանության խնդիրները, դեպի պաշտպանության աշխատանքի հարցերը։

Տպագիր թերթերում հաճախ կարելի է հանդիպել այնպիսի տեղեկությունների, թե ինչպես սահմանային շրջանների կոլտնտեսականները հերոսական պայքար են մղում խորհրդային սահմանները խախտողների, լրտեսների և դիվերսանտների դեմ, թե ինչպես են օգնում կարմիր բանակայիններին ռազմական ուսուցման ժամանակ և այլն։ Այս փաստերի մասին ևս պետք է գրել պատի թերթերում։ Այնուհետև հարկավոր է հեռակայողներին խորհուրդ տալ, որ պատի թերթում տպագրեն կենտրոնական թերթերում ու ժուռնալներում տպագրվող կարմիր բանակային երգերը։

Ցուլ վերջապես սաղմական գրքերի, քաղաքա-
ցիական կոլխոզների մասին յեղած պատմվածքների,
վեպերի մասին գրախոսականները (կամ ուղղակի
տեղեկությունները նրանց մասին), կինոնկարների
մասին գրախոսականները (կամ ավելի լավ է այդ
նկարը դիտած մարդկանց կարծիքները)—այս ամենը
են, վորպես պաշտպանության պրոպագանդի ձևեր,
պետք է տեղ գտնեն պատի թերթերում։ Օրինակ,
պատի թերթի համար հիանալի նյութ կարելի յե
պատրաստել, յերբ կոլտնտեսականները կդիտեն «Չա-
պաեւ», «Մենք Կրոնշտադից ենք» և նման կինոնկար-
ներ։

Կոնսուլտանտը շարունակ պետք է ընդգծի, վոր
պատի թերթերը պաշտպանության աշխատանքը պետք է
կատարեն սիստեմատիկաբար։ Հենց այստեղ էլ, վորպես
գործի սկիզբ պետք է մի քանի կոնկրետ խնդիր նշել
և հեռակայողներին խորհուրդ տալ, վոր այն մտցնեն
իրենց պատի թերթի պլանի մեջ, այն հաշվով, վոր
հետո, հետագա կոնսուլտացիաների ժամանակ ստուգ-
վի, թե հեռակայողներն ինչպես են կատարել այդ
աշխատանքը։

Կոնսուլտացիայի չորրորդ մասը պետք է նվիր-
ված լինի պաշտպանության աշխատանքի այն կոնկ-
րետ խնդիրներին վորոնց կատարման համար կոչված
են պայքարելու պատի թերթերը։ Հեռակայողներին
պետք է նշել, վոր այդպիսի գործերի բացակա-
յությունն արժեքազրկում է այն մեծ ու խիստ կա-
րևոր գաղափարական դաստիարակչական աշխատանքը,



վորի մասին խոսվեց կոնսուլտացիայի առաջին մա-
սում։ Թերթը կազմակերպիչ է և նրա կոչերը միշտ
էլ պետք է ամրապնդվեն կոնկրետ կազմակերպչական
աշխատանքով։

Թե հատկապես ինչ պիտի անեն Պաշ-Ավիաքի-
մի կազմակերպությունները, դրա մասին դասախոս-
ության մեջ ասված է մանրամասն։ Կոնսուլտացի-
այի ժամանակ հեռակայողներին պետք է նախազգու-
շացնել, վոր նրանք միանգամից չձեռնարկեն բոլոր
խնդիրներին—և՛ քիմիական ջոկատ կազմակերպելուն,
և՛ պաշտպանության տան հիմնելուն, և բոլոր խմ-
բակները կազմակերպելուն։ Հարկավոր է գործն սկսել
մի վորևե խնդրից, սակայն գործը համառորեն մինչև
վերջ տանել։

Թե ինչից պիտի սկսել, թե պատի թերթը հատ-
կապես ինչի համար պիտի պայքարի, այդ ցույց կը-
տան տվյալ կոլտնտեսության կոնկրետ պայմանները։
Հեռակայողը դրա մասին պետք է զրուցի կուսկազ-
մակերպչի հետ, ակտիվի հետ, յերիտասարդության,
պահեստի հրամանատարների, նախկին կարմիր բանա-
կայինների հետ։ Ինքը, կոնսուլտանտը մի ընդհանուր,
միասնական պլան չպետք է փաթաթի հեռակայողնե-
րի վզին։ Կոնսուլտացիայի ժամանակ ավելի կարևոր
է հեռակայողներին սովորեցնել, թե թերթն ինչպես
պիտի կամպանիա մղի այս կամ այն ձեռնարկության
համար։

Պատի թերթը Պաշ-Ավիաքիմի աշխատանքի
կազմակերպիչը պիտի լինի։ Սակայն թերթն ունի իր

տանձնահատուկ, յուրահատուկ մեթոդները և յերբեք չպետք ե փոխադրին մյուս կազմակերպություններին։ Ի հարկե, միանգամայն հնարավոր ե, վոր պատի թերթի խմբագիրը միաժամանակ Գաջ-Ալիաքբիմի վարեն խմբակի ղեկավարը լինի։ Սակայն այդպիսի զուգադիպություններ կարող են և չլինել, իսկ խըմբագրի դերը դրանից ամենևին չի նսեմանում։ Պատի թերթն իր կարևոր խնդիրներն ունի—այս կամ այն ձեռնարկման շուրջը հասարակական կարծիք ստեղծել կոլտնտեսականների մեջ ժամանակին հարց դնել դըրա մասին, բացատրել նրա նշանակությունը և այնպես անել, վոր նա մինչև վերջ հասցվի։ Ամեն օր լուսաբանել Գաջ-Ալիաքբիմի աշխատանքը, քննադատությամբ ուղղել նրա թերությունները—ահա թե ինչ պետք ե սովորեցնել հեռակայողներին։

Հասկանալի յե, վոր պիտի սովորեցնել վոչ թե պատրաստի դիագրամներով, այլ այնպիսի մի վորևե գրական փորձի վերլուծմամբ, վոր կատարել ե պատի թերթը կամ տպագիր թերթը։

Ահա, որինակ. «Ստախանովեց» թերթի խմբագիրը գիտեր, վոր կոմյերիտական Սիգուրինը հետաքրքրվում ե ռազմական հարցերով։ Նա զրույց ունեցավ նրա հետ և օգնեց, վոր մի նամակ գրի պատի թերթին։ Այդ նամակում խիստ քննադատվում եր այն, վոր կոլտնտեսության մեջ Գաջ-Ալիաքբիմի աշխատանքն անուշադրության ե մատնված։ Ընկ. Սիգուրինն առաջարկում եր, վորպես ակիզբ, հրաձգային խմբակ կազմակերպել։ Թող վարչությունը դրա համար միջոցներ տրամադրի, իսկ կոմյերիտական կազմակերպությունն զբաղվի հրաձգարանի կառուցմամբ։ Ընկ. Սիգուրինն իր նամակը վերջացնում եր մի կոչով՝ պահեստի հրամանատար կոլտնտեսության հաշվետար Աֆրիկանովին—իր վրա վերցնել խմբակի ղեկավարությունը։

Խմբագրությունը տեղավորեց այդ նամակը և ընթերցողներին առաջարկեց իրենց կարծիքը հայտնել ընկ. Սիգուրինի հարուցած հարցի մասին։ Խմբագրական կոլեգիայի անդամներից մեկը յեղավ մի քանի կոմյերիտականների մոտ, խոսեց կոմյերիտական կազմակերպության քարտուղարի հետ։

Նրանք սիրով անձամբ գրվեցին հրաձգային խմբակին և պարտավորություն վերցրին զբաղվել հրաձգարանի կազմակերպման գործով։ Դրա մասին նրանք փոքրիկ թղթակցություններ գրեցին պատի թերթին։ Հաշվետար Աֆրիկանովը համաձայնեց խմբակը ղեկավարել և նա ևս, խմբագրի խնդրանքով դրա մասին գրեց պատի թերթում և միաժամանակ հայտնեց, թե վորը պիտի լինի խմբակի պարապմունքների ծրագիրը։ Ծերունի վորսկան Սիմեոնովը շատ լավ հրաձիգ ե։ Նա իր թղթակցության մեջ խիստ գրգռեց յերիտասարդությանը, գրելով, թե՝ «դուք ինձ չեք հասնի, ձեզ մրցման եմ կանչում»։

Այնքան շատ նյութ հավաքվեց, վոր խմբագրական կոլեգիան վորոշեց հատուկ արտակարգ համար լույս ընծայել։ Մի փոքրիկ առաջնորդողից հետո, վորի մեջ խոսվում եր, թե ինչ խոշոր նշանակություն ունի

ընկ. Միգուրինի առաջարկությունը, տեղավորված էյին բոլոր հավաքած թղթակցությունները։

Առաջին իսկ հերթական նիստում կոլտնտեսության վարչությունը քննության առավ պատի թերթի համարը և փող բաց թողեց հրացաններ գնելու համար։ Պատի թերթն իր հաջորդ համարում տեղավորեց վարչության այդ վորոշումը և հաղորդեց, թե ով է գնալու հրացաններ գնելու և պատմեց, թե ով է գնում հրաձգարանը կահավորելու։

Թերթը գործը մինչև վերջ հասցրեց. հրաձգային խմբակն սկսեց աշխատել։ Դրանից հետո էլ թերթը շարունակեց ուշադիր հետևել խմբակի աշխատանքին, պարբերաբար հաղորդում էր նրա աշխատանքի մասին, առանձին հրաձիգների հաջողության մասին, քննադատում էր անկարգապահներին և այլն։ Իսկ հետո, շուտով նույն թերթի նախաձեռնությամբ հրաձգային մրցություն տեղի ունեցավ հարևան կոլտնտեսության հետ։

Ահա այս, կամ սրա նման որինակի հիման վրա կոնսուլտանտը հեռակայողներին պետք է ցույց տա, թե թերթն ինչպես պիտի բացատրի պաշտպանության աշխատանքի կարևորությունը, ինչպես պիտի հասարակական կարծիք ստեղծի, ինչպես պիտի սկսած գործը մինչև վերջ հասցնի։

Խորհուրդ ենք տալիս կոնսուլտացիային հրավիրել նաև Պաշ-Ավիաքիմի շրջանային կազմակերպության ներկայացուցչին։ Թող նա հեռակայողներին պատմի շրջանի կոլտնտեսություններում կատարվող աշխա-



տանքի մասին և օգնի նրանց ապագա աշխատանքի պլանը նշելու։

Մինչ այդ, հեռակայողները պաշտպանության խնդիրները դնելու վորոշ փորձ ձեռք կբերեն, հանդես կգան նաև լավագույն պատի թերթեր։ Կարևոր է կոնսուլտացիայի ժամանակ լսել այդպիսի թերթերի խմբագիրներին և բոլոր հեռակայողների հետ վերլուծել նրանց պատի թերթերը։ Նախապես կարելի յե մի քանի հեռակայողների հանձնարարել, վոր այդ թերթի բանավոր տեսությունը տան։ Եթե առաջին կոնսուլտացիան իր արդյունքն ունեցել է, ապա մի աշխույժ զրույց կսկսվի։ Եթե կոնսուլտանտն այնպես է արել, վոր պատի թերթերը գրում են պաշտպանության թեմաների մասին, ապա ամեն մի խմբագիր մտքերի փոխանակության համար նյութ կգտնի, կծագեն նոր թեմաներ, պատի թերթերի նոր առաջարկություններ՝ պաշտպանության աշխատանքի բարելավման մասին։

Այս կոնսուլտացիայի յերկրորդ մասը խորհուրդ ենք տալիս հատկացնել այն համարի պլանը մշակելուն, վոր պիտի նվիրվի Կարմիր բանակի տասնիներորդ տարեդարձին (փետրվարի 23)։ Դրա մասին առաջուց պետք է նախազգուշացնել հեռակայողներին, վորպեսզի կոնսուլտացիայի գան պլանի նախագծով, նախորոք մտածված թեմաներով։

Հոբելյանական պատի թերթերի ուրվագծերը կոնսուլտանտին պարզ կլինեն այն ժամանակ, յերբ կծանոթանա, թե հեռակայողներն ինչ են գրում պաշտ-

պանության հարցերի մասին։ Առաջին կոնսուլտացիայում պետք է պատմել նաև այն մի քանի թերթերի տխուր օրինակը, վորոնք ամբողջ տարվա ընթացքում վոչինչ չեն գրում Գայ-Ալիաքիմի աշխատանքի մասին, Կարմիր բանակի մասին, բայց փետրվարի 23 - ին հանդիսավոր համար են լույս ընծայում։

Հեռակայողներին պետք է հասկացնել, վոր այդպիսի համարի նյութն անխուսափելիորեն շատ ընդհանուր կլինի, հետևապես քիչ օգուտ կտա։ Ուրիշ բան է, յեթե հոբելյանական համարը շատ կարճ գրի յերկրի պաշտպանության ընդհանուր խնդիրների և ունեցած նվաճումների մասին, իսկ գլխավոր ուշադրությունը կենտրոնացնի նրա վրա, թե ինչ է արված իրենց կոլտնտեսությունում, ինչ հաջողություններով կարող են կոլտնտեսականները դիմավորել Կարմիր բանակի օրվան։ Պատի թերթը փետրվարի 23-ին պետք է ի մի ամփոփեն Գայ-Ալիաքիմի խմբակների աշխատանքը, ցույց տան, թե կոլտնտեսականները վորքան են պատրաստ իրենց հայրենիքը պաշտպանելու։ Այդ նույն համարում պետք է նշել և այն ինչ դեռ չի արված, բայց անպայման պետք է կազմի յեկող տարվա աշխատանքի պլանի հիմքը։

Հեռակայողների հետ միասին նշելով պլանի թեմաները՝ կոնսուլտանտը պետք է հատկապես կանգ առնի այն խնդրի վրա, թե ինչ նշանակություն ունի ինֆորմացիան պատի թերթում, պաշտպանության հարցերի մասին։ Գայ-Ալիաքիմի խմբակների աշխատանքը, խմբակի առանձին անդամների նվաճումները,



ռազմա-ուսուցման պիտույքները (ինչ է նոր ստացված, ինչ է գնվելու), արձակուրդ յեկած հրամանատարների ու կարմիր բանակայինների հետ ունեցած զրույցները ու այս ամենը և պաշտպանության թեմաների մասին ուրիշ շատ նյութեր պետք է արտացոլել պատի թերթում և այն էլ վոչ թե յերբեմն-յերբեմն, այլ մշտապես, կանոնավոր կերպով։

ՀՍԽՀ-СОР
ИМ. А. МЯСНИКЯН

Գյուղհրատի տպարան, Երեվան
Գլավլիտի լիազոր № 2239, պատվեր 7, տիրաժ 400

ՀՀ Ազգային գրադարան
NL0139199

24
14791
07
L-33